ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՎՏՐԻ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 7/08

Քաղ. Երևան 29 ապրիլի 2009թ.

Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ Ս.Ս.Խաչիկյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար Լ. Ասցատրյան, իր 2008թ. ապրիլի 29-ի նիստում (արձանագրություն № 60/1) քննարկեց «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2007թ. դեկտեմբերի 12-ի դիմումը Henkel KgaA (DE) ընկերության «Cristal» (IR 630563) ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱԾՍԴ-ի 03 դասի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ իրենց ընկերության կողմից Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում կատարված մարքետինգային ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ «Cristalե (IR 630563) ապրանքային նշանը սեփականատիրոջ կողմից գրանցման պահից սկսած չի օգտագործվել և չի օգտագործվում ԱԾԱԴ դասերի որոշ ապրանքների համար ավելի քան 5 տարի, և հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասը, խնդրել է «Cristal» (IR 630563) ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 03 դասի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնել:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգիե (այսուհետ նաև կարգ) 34-րդ կետի համաձայն 14.12.07թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է «Cristal» (IR 630563) ապրանքային նշանի սեփականատեր Henkel KgaA (DE) ընկերությանը (Henkelstrasse 67, 40191 DՖsseldorf (DE)) բողոքարկման խորհրդի կողմից 2007թ. դեկտեմբերի 12-ի «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. փետրվարի 27), ՀՀ արտոնագրային հավատարմատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր առարկությունները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին: Սակայն համապատասխան փոստային ծանուցագիրը ետ չի վերադարձել, ուստի և բողոքարկման խորհուրդը համարելով, որ «Cristal» (IR 630563) ապրանքային նշանի սեփականատերը պատշաճ ծանուցված չէ, 2007թ. փետրվարի 27-ի իր որոշմամբ հետաձգել է բողոքի քննարկումը մինչև 2008թ. ապրիլի 29-ը, ինչի մասին 2008թ. մարտի 12-ին ծանուցել է «Cristal» (IR 630563) ապրանքային նշանի սեփականատեր Henkel KgaA (DE) ընկերությանը: Բացի դրանից, բողոքարկման խորհուրդը՝ ելնելով կարգի 35-րդ կետի դրույթներից, խնդրել է այլ գրանցման հարցերով Henkel KgaA (DE) ընկերության ներկայացուցիչ հանդիսացող ՀՀ հավատարմատար Է.Նահապետյանին տեղեկացնել «Cristal» (IR 630563) ապրանքային նշանի սեփականատիրոջը հաջորդ նիստի տեղի և ժամանակի մասին (2007թ. ապրիլի 29):

Բողոքարկման խորհրդի 2008թ. ապրիլի 29-ի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, և բողոքարկման խորհուրդը դիմումի վերաբերյալ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից չի ստացել:

Հաշվի առնելով այդ փաստը, ինչպես նաև այն, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերության համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա սեփականատերը կամ լիցենզային պայմանագրով տվյալ նշանի օգտագործման

իրավունք ունեցող անձը, տվյալ դեպքում, ապրանքային նշանի սեփականատեր Henkel KgaA (DE) ընկերությունը, որի պատշաճ ծանուցելու հնարավորությունները սպառված են, սակայն ապրանքային նշանը ՀՀ-ում օգտագործելու վերաբերյալ որևէ փաստ, ապացույց կամ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից այդպես էլ չի ներկայացվել, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից, ինչպես նաև հաշվի առնելով, որ «Cristal» (IR 630563) ապրանքային նշանը գրանցված է միայն ԱԾՄԴ-ի 03-րդ դասում, և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Բավարարել «Գրանդ Քենդիե Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2007թ. դեկտեմբերի 12-ի դիմումը ամբողջովին և Henkel KgaA (DE) ընկերության «Cristal» (IR 630563) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան